№ 146 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 1895 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 № 146

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՑ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 24-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՎԱԾ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ երեքշաբթի օր, դեկտեմբերի 19-ին, առաւօտեան 12 ժամին

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

մահուան երրորդ տարեդարձի օրը, հոգեհանգիստ պէտք է կատարվի անմոռանալի հանգուցեալի գերեզմանի վրա, Խօջիվանքի գերեզմանոցում։

1—2

Մարթա Եգօրեան Ներսիսեանց իր որդոց հետ, Դարչօ Եգօրեան Միրաքեանց, Սօնա Եգօրեան Մարգարեանց, Եփեմիա Արտեմեան Բամազեանց, յայտնելով իրանց զաւակներին և բարեկամներին՝ առաջինը իր ամուսնու, երկրորդը և երրորդը իրանց փեսայի, վերջինը իր եղբօր՝

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՏԵՄԵԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ Յ Ի

մահը, խնդրում են շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից, Դվօրեանսկայա փողոց, № 3, դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին, այնտեղից Խօջիվանք։ Ամբիծքը՝ երեքշաբթի և չորեքշաբթի օրերը, դեկտեմբերի 19-ին և 20-ին, երեկոյեան 6 ժամին։

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» հիմնադրին.—Գերմանական կոլոնիաներ Փոքր-Ասիայում. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աղնիւ կիւ. Մատենագրութիւն. Նամակ խմբագրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՕՐՍԱ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մաքի մշակը.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏՔԻ ՄՇԱԿԸ

(Մահվան երրորդ տարեդարձին)

—

Այս անպաճոյճ բնակարանի մի համեստ սենեակի մէջ նա անցկացրեց ամբողջ ութ տարի, նախկին, փառաւոր բնակարանի տեղ, այդտեղ նա ապաստանեց, երբ վերադարձաւ Շվեյցարիայից. այդտեղ նա վերսկսեց «Մշակը» 1886 թվին, մին-մենակ, առանց որ և է աջակցութեան, ձեռքում միայն հինգ ռուբլի, բայց լի յուսով դէպի իր գործը, դէպի ժողովրդի համակրութիւնը. այդտեղ, իր փոքրիկ սեղանի առաջ, նա ստեղծագործեց իր կրակոտ յօդուածները, Ասիացու տաղանդաւոր ֆելիետոնները և «Էվէլինան». այդ առանձնութեան մէջ նա շարունակեց իր կռիւը «Մշակի» անթիւ թշնամիների դէմ, և նոյն այդ մոռացված, համեստ, անպաճոյճ բնակարանի մէջ նա տօնեց մայիսի 6-ը, Արծրունու դաղափարների այդ յաղթական տօնը...

Այդ համեստ սենեակի մէջ էլ նա մեռաւ, աչքերը յառած իր «որբ» գրասեղանին, լի ուրախ յոյսով, թէ ահա երկու-երեք օրից յետոյ տոքի կը կանգնի, ձեռք կառնի իր գրիչը, և կը շարունակէ իր աղնիւ, տոկուն աշխատանքը...

—

Ահա կանգնած եմ այդ սենեակի մէջ. ամբողջ տասն տարվայ ուրախ և տխուր յիշողութիւնները իմ առաջ են։ Ինչեր ասէք չէ տեսել այդ անպաճոյճ սենեակը. —հասարակութեան դէմ մաքառող միայնակ գործողի տխուր բօղէները, գրական ծանր, մաշող աշխատանքի անվերջ ժամեր, գեղեցիկ յոյսեր, սպասելիքներ, ժողովրդական բուռն համակրութեան ցոյցեր, մտքի յաղթանակ, և ապա... երկու դաղաղ, մէկը միւսից բաժանված շատ կարճ ընդմիջումով, համարեա երկու տարով...

Ամեն մի իր, ամեն մի անկիւն Արծրունուն է յիշեցնում.—ահա այն սեղանը, որի վրա նա պարապում էր, հէնց այն դրութեամբ, ինչպէս ինքը թողեց. այդ սեղանի կողքին մի փոքրիկ մահճակալ, սեով ծածկված, ուր նա իր վերջին բօղէներն անցկացրեց. իսկ սեղանի դիմաց այն հազուադիւտ կնոջ պատկերը (տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեան), որ երկար տարիներ նրա գործունէութեան և վշտերի անբաժան ընկեր հանդիսացաւ, և որին Արծրունին նուիրեց «Էվէլինայի» վերջին հետևեալ խօսքերը. «Եւ միթէ կարող է պատահել, որ Էվէլինայի պատկերի տեղ, իմ գրասեղանի առջև, մի ժամանակ կախված կը լինի մի այլ կնոջ պատկեր...». ահա այն պահարանը, որտեղ պահված են հայոց հասարակութեան համակրութեան նշանները՝ յօբելեանի ընծաները, իսկ ուրախութեան այդ ընծաների հետ, սուգի այն բուռն արտայայտութիւնը, որ ծածկել է սենեակի պատերը, օճաքից մինչև յատակ, անթիւ պատկիներով.—ահա մի անկիւնում նրա կիսարձանը, միւս անկիւնում նրա մեծադիր պատկերը, նկարված տաղանդաւոր Ադամեանի վրձինով, սեղանի վրա նրա ձեռքը, որ դեռ դաղաղի մէջ պատրաստեց քանդակադործը, այն ձեռքը, որ ամբողջ 25 տարի բռնեց մի փառաւոր դրօշակ, այնքան արիաբար, այնքան ամուր...

—

Արծրունու տաղանդի և արժարժած դաղափարների մասին շատ է դրված, և թող ուրիշները էլի դրեն։ Այսօր, նրա մահվան երրորդ տարեդարձի օրը, ես օգուտ եմ քաղում առիթից չեշտելու այդ օրինակելի մարդու երկու յատկութեան վրա,—որ մանաւանդ մեր թուլամորթ ինտելիդենցիայի համար շատ խրատական և ուսանելի է։ Այդ յատկութիւններից մինը՝ նրա տոկուն աշխատասիրութիւնն է, և միւսը՝ այն ներդաշնակութիւնը, որ կար նրա իւրաքանչիւր խօսքի և գործի մէջ։

Նրանք, որոնք միայն հեռուից են ճանաչում Արծրունուն, դուցէ կարծում են, որ նա իր յաղթանակները տարաւ միմիայն իր տաղանդի, իր մտքի արտասովոր ոյժի շնորհով։ Այդպէս կարծողները սխալվում են։ Նա իր տաղանդին միացրեց մի տոկուն, անվերջ, անընդհատ աշխատանք, և ահա տաղանդի և աշխատանքի այդ միացումն էր, որ կարողացաւ այնքան անջնջելի դարձնել նրա 25 տարվայ դրական գործունէութիւնը...

Դեռ 1871 թվին, երբ նա հրատարակեց մի յայտարարութիւն՝ «Մշակը» սկսելու մասին, նա այն կարծիքն էր յայտնում, որ ամեն մարդուն չէ վիճակված տաղանդ լինել, բայց ամեն մարդ պէտք է աշխատի, մշակ պէտք է լինի առաջադիմութեան գործի համար, և իր այդ մտքին նա հաւատարիմ մնաց իր երկարամեայ գործունէութեան միջոցին թէ այն ժամանակ, երբ միլիոնատէր էր համարվում, և թէ այն միջոցին, երբ իր համեստ ապրուստը հայթայթում էր իր գրչով միայն։

Նա հիմնեց «Մշակը», բայց միայն հիմնելով չը բաւականացաւ։ Նա դարձաւ «Մշակի» խմբագիր, բայց խմբագրի պաշտօնը նա չը հասկացաւ այնպէս, ինչպէս ընդունված է հասկանալ, այլ նա բոլորովին փոխեց հայ լրագրի ամբողջ կազմուածքը և կերպարանքը, նա տուեց նրան պատշաճաւոր դիրք և բովանդակութիւն և յատկացրեց նրան այն դերը, որ ունի եւրոպական օրագրութիւնը։

Մինչև „Մշակի“ սկզբնաւորութիւնը հայ լրագիրը մի անսիստեմ խառնուրդ էր, անդոյն, անկերպարան, բովանդակութիւնից զուրկ, պարբերական մի խղճալի հրատարակութիւն էր, որի մէջ տեղ էին դտնում կրօնական, հրնագիտական մի քանի յօդուածներ և տեղեկութիւններ, որ երկչոտ կերպով խոյս էր տալիս հասարակական խնդիրների քննադատութիւնից, և ադդայինը լուրերը անուանով զեկուցանում էր շատ նեղ և սահմանափակ շրջանից վերցրած մի երկու ծռմռած, ծեփծփած տեղեկութիւններ։

Ոչ ոք լրագրի միջոցով չէր խօսում առօրեայ հասարակական ցաւերի մասին. վտանգաւոր և գայթակղեցուցիչ էին համարում լրագրի մէջ քննել, քքքրել հասարակական զեղծումներ և չարագործութիւններ։ Խոհեմութեան անուանով փարիսեցաբար ծածկվում էին ամենասարսափելի չարիքներ, ամենաանտանելի զանցառութիւններ, և բողոքի ու տրտունջի ձայնը խեղդվում էր ամենաանպատկառ կերպով։ Փարիսեցիութեանը միանում էր մի միջնադարեան մտավախութիւն, որ ինքը ստեղծում և հնարում էր երկիւղների մի չեղած աշխարհ։

„Մշակի“ երևալը մի ահեղ որոտ էր այդ աւերակների աշխարհում, մի կայծակնային շլացուցիչ լոյս՝ թանձր խաւարում։ Այդ որոտից պէտք է խորտակվէին հին, մաշված հասկացողութիւնները, այդ լոյսի մէջ պէտք է մերկանային այն զազիր գործերը, որ անպատիժ կերպով ծածկվել էին երկար տարիներ։ Պէտք է սկվէր մի յուսահատ դիմադրութիւն և կռիւ, որ ահա մօտ քառորդ դար է շարունակվում է։

Գրիգոր Արծրունին մտցրեց լրագրի մէջ այն բոլոր խնդիրները, որոնք ժողովրդի զարդացման, հասարակական շահերին են ծառայում։ Նա հանեց լրագրութիւնը նեղ և անորոշ գործունէութեան շրջանակից և տուեց նրան մի կողմից բովանդակութիւն, միւս կողմից ներդործական բնաւորութիւն, յատկացնելով լրագրին կրթող, կազմակերպող դեր և մաքառելով նրա միջոցով վնասակար ձգտումների դէմ։

Այժմ լրագիրը մեր մէջ մօտենում է այն կոչումին, որ նա պէտք է ունենայ, որին նա ծառայում է կրթված մարդկութեան մէջ։ Թոյլատրված սահմաններում նա շօշափում է հասարակական խնդիրները և նպաստում նրանց քննութեան և լուծման։

Ճիշդ է, հին և խաւար հասկացողութիւնները դեռ այժմ էլ գործում են, խոհեմութեան դրօշակի փարիսեցիական ասպետները այժմ էլ աղմուկ են հանում իրանց կոտրած և ժանգոտած թերթերով, բայց գործը և ժամանակը մեծ նուաճումներ են արել։—Բուբիկոնը արդէն անցել ենք։ Այժմ աշխատանք և բարեխիղճ աշխատանք է հարկաւոր՝ սկսած գործը արդասաւորելու համար։

Ա. Քալանթար

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՕԼՕՆԻԱՆԵՐ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

—

Բերլինի կոնդրէսից յետոյ Գերմանիան ամեն ջանք գործ դրեց բարեկամական յարաբերութիւն պահպանելու Թիւրքիայի հետ և, պէտք է խոստովանել, աջողութիւն ունեցաւ։

Այդ բարեկամութիւնը, ի հարկէ, պլատոնական չէր։—Բիսմարկի շէոլան քաղաքականութեան մէջ ոչ մի պլատոնական, բարձր զգացմունք չէ ընդունում։—այլ հիմնված է այն անտեսական—քաղաքական շահերի վրա, որոնք կազմում են գերմանական քաղաքականութեան միակ նպատակը։ Եւ նպատակը փոքր առ փոքր իրագործվում է։—գերմանական դիպլոմատիայի անժխտելի ազդեցութիւնը Կ. Պոլսում, գերմանացի օֆիցէրների ղեկավարող ոյժը Թիւրքաց զօրաբանակի մէջ, և վերջապէս գերմանական կոլոնիաներ հիմնելը Փոքր-Ասիայի խորքերում, հայ, յոյն տարրի կողքին, այդ քաղաքական ազդեցութեան շօշափելի արդիւնքներն են։

Ով գիտէ.—մի օր դուցէ գերմանական դիպլոմատիայի ազդեցութիւնը կը փոքրանայ Կ. Պոլսում, նրա տեղը դուցէ մի ուրիշը կը բռնի, բայց գերմանական կոլոնիաների հաստատելը Փոքր-Ասիայում մի այնպիսի քայլ է, որ երբէք անհետք չի լինի,

և միշտ բաց կը պահի Գերմանիայի տընտեսական շահերի համար՝ Թիւրքիայի ասիական գաւառները։

Ինքը գերմանական կառավարութիւնը այդ կոլոնիաներին ահագին նշանակութիւն է տալիս, տարուց տարի աշխատում է, առանց աղմուկի, զօրեղացնելու, բազմացնելու բուն գերմանական տարրի ներկայութիւնը Փոքր-Ասիայում, հաւատացած լինելով, որ այդ աշխատասէր, ընդունակ, տոկուն տարրը կարող կը լինի տնտեսապէս հալածել ոչ թէ միայն Ծոյլ, անընդունակ Թիւրք տարրին, այլ նոյն իսկ Թիւրքերից անհամեմատ ընդունակ հայ և յոյն ազգերին։

Այդ կոլոնիաների ապագայի մէջ Գերմանիան մեծ շահեր է նախատեսնում, և միայն այդ շահն է, որ ստիպում է Բերլինի կառավարութեանը հաշտ մնալ Թիւրքիայի հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶՆԻՒ ԿՈՒԻ

—

Երեք տարի սրանից առաջ, այս իսկ օրը, դեկտեմբերի 19-ին, յաւիտեան լռեց առաջնորդը մարանչողը։ Այն ահագին բազմութիւնը, որ այդ օրից յետոյ մի ամբողջ շաբաթ, ամեն երեկոյ գալիս հաւաքվում էր «Մշակի» խմբագրատան առաջ, թաղման այն հանդէսը, որի նմանը դեռ չէ տեսել Կովկասի մայրաքաղաքը, բոլոր ազգութիւնների այն միաբերան, անկեղծ ցաւակցութիւնը, որ խոշոր փաստերով արտայայտվում էր թէ մամուլի մէջ, թէ խոջիվանքի գերեզմանատանը,—այս ամենը շատ լաւ ցոյց էր տալիս, որ տարիների ազնիւ կռիւը պսակված է յաղթանակի դափնիներով։

Հասարակական զգացմունքը անսխալ էր։ Նրա դատաստանը ոչ կանխահաս էր, ոչ կողմնապահ։

Այսօր, երբ երեք տարիների շրջանը բոլորվելով բերում է մեզ այդ անմոռանալի օրերի յիշատակը, նորից զարթնում է նոյն հարցը. ինչ թողեց մեզ Գրիգոր Արծրունին։

Աչքը տեսնում է նրա գործը։ Երկու տասնեակ հատորներ են դրանք, որոնք լուռ ու մունջ կանգնած են պահարանում։ Այդպէս են նրանք իբրև գրքեր։ Թերթեցէք նրանց և նրանք կը խօսեն պարզ ու պերճախօս լեզուով։ Նորից կը վերադառնան տարիները, կանցնեն ձեր առաջ։

Տարիների կռիւն է ապրում այդ կաղմերի մէջ։ Որքան յուզմունք, որքան կիրք, որքան իրարանցում։ Կռիւ ասիական անշարժութեան դէմ, կռիւ խաւար հակացողութիւնների և պաշտամունքների դէմ, կրօնական մոլեռանդութեան, դատարկ ու անհիմն ինքնագովութեան դէմ, կռիւ ազգութեան դէմ, յանուն հանրամարդկային գաղափարների, յանուն առաջադիմութեան, որ մարդկութիւնը տանում է դէպի երջանկութիւն։

Բազմակողմանի, դժուար, անհաւասար կռիւ։ Նրա մէջ հարուածվում էին անշարժ, քարացնող տարրերը, մոլի նախապաշարմունքները, հնադարեան այն հասկացողութիւնները, որոնք հասարակական կեանքի սիւներն էին համարվում։ Թոյն, մտրակ—դրանք ազնիւ կռւի միջոցներն էին. դրանք զարթեցնում էին, ցաւեցնում էին, ղգալ էին տալիս թէ որպիսի անողորմ, խիստ պահանջներ է անում ժամանակը, գիտակցական առաջադիմութեան հոգին։

Ահագին էր այդ կռւի մէջ դիմադրողների թիւը։ Ապագան կը դատէ այդ դիմադրութեան արժանաւորութիւնը։ Մեզ միայն մնում է մատնացոյց անել բացառիկ երեւոյթը. Արծրունին մենակ էր բազմաթիւ հակառակորդների դիմաց, բայց և այդպէս, երբէք բաց չէր թողնում իր բռնած դիրքերից և ոչ մէկը։ Քսան տարի այսպէս տարաւ կռիւը, չը վհատելով, մինչև անգամ չը զզվելով այն յուսահատեցնող միջավայրից, ուր նա գործում էր։ Նիզակակիցների մի ամբողջ շարք թուլացան, յետ մնացին. նա անցաւ նրանց վրայով։ Միայն մահը կարողացաւ խլել գրիչը նրա ձեռքից։

Այդ անսովոր, զարմանալի տոկունութեան պատճառները որոնեցէք նրա խոշոր տաղանդի մէջ։ Գաղափարի մի մոլեռանդ երկրպագու, նա ունէր հոգու արիութիւն, որ երկաթի կամքով և կրակոտ եռանդով պահպանում էր նրա անսահման սէրը դէպի գործը, նրա հաւատը դէպի քաղաքակրթութեան, սուրբ ճշմարտութիւնների յաղթանակը։ Եւ այդ պատճառով նա մնաց մինչև վերջը թարմ, վառվռուն, երիտասարդական աշխոյժով։ Մաքուր, անշահասէր, անկաշառ մարդը համարձակ էր իր դատաստանների մէջ, անողոք էր իր պահանջների մէջ։ Կտրուկ էր նրա խօսքը, պարզ, ամենքին հասկանալի։

Նրա համար, ի հարկէ, հնարաւոր էր յամառ, երկարատև կռիւը։

Եւ նա, այդ կռիւը, չը մնաց թղթի վրա, այլ մտաւ կեանքի մէջ, իրականացաւ, հող հերկեց, սերմեր մանկեց ու հացրեց։ 20—25 տարիների շրջանը մի մեծ ժամանակամիջոց չէ մի մտաւոր շարժման համար։ Եւ սակայն այնքան ժամանակակից, անուրանալի ճշմարտութիւններ էին Արծրունու քարոզները, որ հէնց այդ գործունէութեան շրջանում, քանի դեռ շարունակվում էր կռիւը, նրանց մեծ մասը դարձաւ ընդհանուրի սեփականութիւն, տարրական հասկացողութիւն։

Մի ժամանակ ինչ երկարատև, կատաղի բանակռիւ էր հարկաւոր կրօնական համբերողութեան սկզբունքը պաշտպանելու համար, որքան ջանք էր հարկաւոր հասկացնելու համար, որ կրօնական միութեամբ չէ ապահովվում ազգի ամբողջութիւնը։ Իսկ որպիսի սարսափ էին պատճառում հակառակորդներին Արծրունու հայեացքները թիւրքահայերի մասին...

Կռիւը, ազնիւ, շիտակ, գաղափարական կռիւը բարերար էր։

Կանցնեն մի քանի տարիներ էլ. կիրքը, կոյր թշնամութիւնը տեղի կը տայ անաչառութեան, այն ժամանակ աւելի ևս որոշ կերպով կը դիծագրվի Արծրունու հսկայական գործունէութիւնը մեր մտաւոր հորիզոնի վրա...

Լէո

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Հայ պատմագիր Աբու-Սալէհ

Պարիզի ազգային մատենադարանի մէջ պահվում է մի արաբական ձեռագիր, որ բովանդակում է իր մէջ XII-րդ դարի եգիպտական կամ ղպտական եկեղեցիների և վանքերի նկարագրութիւնը։ Այդ ձեռագիրը ձեռք է բերվել Եգիպտոսում XVII-րդ դարում։ Դժբաղդաբար, այդ ձեռագիրը լիակատար չէ. առաջին քսան թերթերը չը կան. բացի դրանից, նա միայն համառօտութիւն է մի ընդարձակ աշխատութեան, որի հեղինակը, ինչպէս երևում է ձեռագրի վերնագրից, եղել է Աբու-Սալէհ անունով մի հայ, որ ապրում էր Եգիպտոսում XII դարի վերջում և XIII դարի սկզբում։

Այս օրերս Օքսֆօրդում հրատարակվել է այդ ձեռագրի անգլիական թարգմանութիւնը, բազմաթիւ ծանօթութիւններով և Եգիպտոսի քարտէսով, հետևեալ վերնագրով. «The churches and monasteries of Egypt and some neighbouring countries attributed to Abu Salih the armenian» (Եգիպտոսի և մի քանի դրացի երկիրների եկեղեցիները և վանքերը՝ վերագրված Աբու-Սալէհ հային)։

Յայտնի է, որ ղպտական եկեղեցին քրիստոնէական աշխարհի մէջ ամենահին եկեղեցիներից մինն է համարվում։ Ղպտացիները կամ կոպտերը (copte), որոնք համարվում են հին եգիպտացիների սերունդը, ունեն իրանց ազգային եկեղեցին, իրանց լեզուն և առանձին պատրիարքութիւն։ Պատրիարքը համարվում է ս. Մարկոս աւետարանչի յաջորդը, որովհետև, աւանդութեան համաձայն, Ալէքսանդրիայի եպիսկոպոսական աթոռը հիմնել է Մարկոս աւետարանիչը և, ինչպէս յայտնի է, այդ աթոռը քրիստոնէական եկեղեցու նուիրապետութեան մէջ առաջնակարգ տեղ էր բռնում։ Իրանց տարեգրութիւնը ղպտիները սկսում են 284 թվականից, Դիոկղէտիանոս կայսրի գահակալութեան օրից, որի թագաւորութեան ժամանակ տեղի ունեցաւ քրիստոնեաների ամենախիստ հալածանքը։

Մինչև Քաղկեդոնի եկեղեցական ժողովը ղպտական եկեղեցին համարվում էր տիեզերական եկեղեցու մասը։ Բայց երբ 451 թվին Քաղկեդոն քաղաքում գումարվեց տիեզերական ընդհանուր ժողով՝ հայոց եկեղեցու հետ միասին և ղպտաց եկեղեցին էլ չընդունեց ժողովի վճիռը։

Ղպտական եկեղեցին, համամիտ լինելով հայոց եկեղեցու հետ Քաղկեդոնի ժողովի վերաբերմամբ և համարվելով մի և նոյն վարդապետութիւնը դաւանող, դեռ արաբների տիրապետութեան օրից, ենթարկվեց հայոց եկեղեցու իրաւասութեան և մինչև այսօր էլ Երուսաղէմում ղպտիները համարվում են հայոց եկեղեցու հետևորդներ, հոգևորականութիւնը ձեռնադրվում է հայոց պատրիարքից և Քրիստոսի գերեզմանի վրա պատարագ է մատուցանում միայն հայոց հոգևորականութեան թոյլտուութեամբ։ Այդ պատճառով հայերը միշտ վերաբերվել են ղպտիներին, իբրև իրանց դաւանակիցներին, և այդպէս էլ նկատվում են օտար եկեղեցիների կողմից։

Եւ ահա XII-րդ դարում մի հայ, Աբու-Սալէհ անունով, գրել է ղպտական եկեղեցու պատմութիւնը և մասնաւորապէս ղպտական եկեղեցու մի մեծ բէֆօրմատորի կեանքի նկարագրութիւնը, որը, առանց Աբու-Սալէհի այդ աշխատութեան, դուցէ բոլորովին անյայտ մնար։ Այդ բէֆօրմատորն է Մարկոս-Իբն-Ղամբար (Ղամբարի որդի Մարկոս) քահանան, որին, սակայն Աբու-Սալէհ վերաբերվում է ոչ համակրութեամբ, համարելով նրա գործունէութիւնը ուղղված ղպտական նախկին եկեղեցու, ուրեմն և հայոց եկեղեցու վարդապետութեան ու կազմակերպութեան դէմ։

Ահա Աբու-Սալէհի այդ ձեռագիր պատմութեան թարգմանութիւնն է, որ այս օրերս լոյս են ընծայել ղպտական եկեղեցական հնագիտութեան երկու գիտուններ—Լվէտս և Բուալէր։ Այդ թարգմանութեան շնորհով, մենք իմանում ենք որ առաջին՝ XII-րդ դարում գոյութիւն է ունեցել մի հայ ուսումնական և պատմագիր Աբու-Սալէհ անունով, երկրորդ՝ որ այդ դարում Եգիպտոսում յայտնվել և գործել է մի անձն, «որը—ինչպէս ասում է Ա. Սալօմոն «Вѣстникъ Европы» ամսագրում տպված «Коптскій реформаторъ» վերնագրով յօդուածի մէջ—եթէ ծնվեր ոչ Եգիպտոսի խուլ տեղերում, մարդկութեան ընդհանուր կուլտուրական շարժումից հեռու, դուցէ նրա անունը պատմութիւնը արձանագրէր այնպիսի մեծ կրօնական բէֆօրմատորների անունների հետ, ինչպէս Աբելարը, Բէրնարդը, Պետրոս Լոմբարդցին։»

Եւ, ճշմարիտ, կարդալով Աբու-Սալէհի ձեռագիրը, մենք տեսնում ենք, որ Մարկոսի գործունէութեան հիմքը մի եռանդուն ձգտում էր դէպի կրօնական վերանորոգութիւնը, բայց այն մտքով, որ հաւատը հիմնված լինի փիլիսոփայութեան վրա, որ եկեղեցական ուսումը ժողովրդականացրած լինի, որ եկեղեցին մաքրվի զեղծումներից, որ եկեղեցին ազդէ ժողովրդի վրա կենդանի խօսքով և գործով, որ նա ոչ թէ արտաքին, մեռած ծէսերի, այլ մարդասիրութեան, և քրիստոնէական ներողամտութեան արտայայտիչ լինի։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԹԱՆ-ԲԵԱՆԴԻՑ

—

Դեկտեմբերի 13-ին

Սրանից երկու օր առաջ, ինձը անյայտ աւազակներ, լաւ զինված՝ գնում են Խոջալու գիւղից դէպի հիսիս գտնված Ցիլիս գիւղը։ Գիւղի մօտ իջնում են ձիերից, և յետոյ յարձակում էր իր դրասեղանի մօտ, և մինչև ժամի 3-ը, շատ անգամ 4-ը, գրում կամ կարդում էր... Եւ այդ անընդհատ, ոչ մի բօսէ հանգստութիւն տուող աշխատանքը, ինչպէս մի մշակ, նա կատարեց ոչ թէ մի տարի, հինգ տարի, այլ ամբողջ 22 տարի...

—

Այդ անվերջ, ծանր, մաշող աշխատանքը, անկասկած, հեռանք էր ոչ թէ այն բանի, որ Արծրունին չէր սիրում հանգստութիւն, կամ չէր զգում թէ դա կարող է ծանր նստել իր առանց այն էլ թոյլ առողջութեան, այլ այն հոգեկան յատկութեան, որի շնորհիւ նա ձգտում էր անպայման ներդաշնակութիւն ստեղծել իր խօսքի և իր գործի մէջ։ Նա հրապարակ էր եկել իբր մշակ, նպատակ էր դրել աշխատել, և ահա այդ անխարդախ, խորը համոզմունքն էր, որ թելադրում էր նրան մտաւոր գործունէութեան մէջ նոյնպէս մշակ լինել, ինչպիսի մշակներ կան ֆիզիկական գործունէութեան մէջ։ Ցոկուն աշխատութիւնը մի կողմից, իսկ խօսքի և գործի ներդաշնակութեան ձգտումը միւս կողմից, դարձրին նրան, իբրև անձնաւորութիւն, վերին աստիճանի օրինակելի, վերին աստիճանի բարձր։

Տասն տարի է որ ես «Մշակի» խմբագրութեան անդամ եմ և այդ տասն տարվայ ընթացքում այն է կարդալ մի քանի պատրաստ յօդուածներ և ստորագրել համարը, և վերջ։ Նա մի մշակ էր, մի տոկուն աշխատաւոր, որ իր ամբողջ մտաւոր և ֆիզիկական ոյժերը նուիրել էր իր գործին։—Առաւօտը վեր էր կենում ժամը 7-ին, և անմիջապէս նստում գրասեղանի առաջ։ Գրում էր ոչ թէ միայն առաջնորդող յօդուածներ, բանասիրականներ, ֆելիետոններ, այլ կատարում էր բոլոր աշխատանքները, որոնք վերաբերում էին լրագրին։ Նա քրքրում էր գաւառական բազմաթիւ անգրագէտ, անշնորք, անվերջ տառասխալներով լի նամակներ, և նրանցից կազմում լուրեր և թղթակցութիւններ. նա թերթում էր թէ ռուսաց և թէ արտասահմանեան լրագիրները և նիւթեր քաղում «Մշակի» համար։ «Մշակի» բովանդակութիւնը հոգալուց յետոյ՝ նա զբաղվում էր լրագրի էկսպեդիցիայով, կազմում էր բաժանորդների մատեանները, կարգադրում պօստի բաժինը, և այդ բոլորի հետ միասին թէ ցերեկները և թէ երեկոյեանները ընդունում էր բազմաթիւ և բազմատեսակ այցելուներ, հիւրեր, որոնց շատերի հետ նա, պատանու եռանդով և աշխոյժով, ամենալուրջ վիճաբանութիւններ էր մղում իրան հետաքրքրող, իրան զբաղեցնող հարցերի մասին։ Գիշերը, ժամը 11-ին, կամ 12-ին, երբ այցելուները հեռանում էին, և նա մնում էր միայնակ, նորից նըստում էր գրասեղանի մօտ, և մինչև ուշ գիշեր գրում էր։

Ամենամեծ հաճոյքը նրա համար էր, երբ նա ստանում էր հայոց գրքեր, հայոց գրողներ, հայոց գրքերի հեղինակներ։ Նա ամենամեծ հաճոյքը զգում էր, երբ նրան գրում էին

կում գործում գիւղի ծխատէր Աղէքսանդր քահանայ Տէր-Իսրայէլեանցի տան վրայ։ Յարձակման միջոցին քահանայի ծառան փախչում է, որի ետևից մօտ քառասուն գնդակ են արձակում, բայց ծառան անվնաս է մնում։ Գիւղացիք թագնվում են տներում, ոչ ոք չէ գնում օգնութեան, իսկ մի քանիսը ծածուկ վազում են մօտակայ գիւղերը օգնութիւն խնդրելու։

Այդ միջոցին աւազակները փորձում են տան դուռը կոտրել. տանը լինում են յիշեալ քահանան և իր մայրը։ Քահանան ուզում է թիկն տուած պահպանել դուռը, բայց դրսից նրան գնդակահար են անում և սպանում։ Ապա մտնում են տունը, կողոտում են քահանայի մօրը, տանում ներքնատունը և ստիպում, որ փողի տեղն ասէ։ Թշուառ կինը յայտնում է, որ փողի տեղը միայն տէրտէրն էր իմանում։ Աւազակները խանչալով մի քանի տեղից վիրաւորում են նրան, վայր գցում ու իրանք մտնում տուն, վերցնում են բոլոր եղած չեղածը, եկեղեցու զարդերն ու անօթները, որոնց ապահովութեան համար քահանան տանն է եղել պահելիս, պատռում են ցորենի բազմաթիւ ջուալները, որ փողը գտնեն, ու թափում գետնին, հաւաքում գտած իրերը ու փախչում։ Այդ միջոցին չրջակայ գիւղերից օգնութեան են գալիս ու ընկնում են չարագործների ետևից. հալածողները խօջալուի մօտ գտնում են եկեղեցու մի քանի անօթներ. մինչև Գառգառ գետը հետևում են, բայց այդտեղ հետքը կորչնում։ Կարծում են, որ աւազակների գլխաւորը Շելլու թիւրք գիւղացի Ասկեր անունով մէկն է, որովհետև դա առաջուց էլ ինչ որ վնաս է տուած եղել այդ քահանային, որը նրանից իր վնասը օրէնքի միջոցով ստացել է։ Գիւղացիք կարծում են, որ նա վրէժ է ուզեցել հանել։

Գաւառապետը այստեղից բացակայ է, նրա օգնականը գնացել է սպանութեան տեղը քննութիւն կատարելու։

Ս—էն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, դեկտեմբերի 17-ին, վրաց ազնուականութեան կալուածական բանկի չինութեան մէջ կայացաւ Թիֆլիսի նահանգի ազնուականների արտակարգ ժողովը՝ Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու առաջիկայ թագադրութեան հանդիսին ներկայ գտնվելու համար պատգամաւորներ ընտրելու։ Ժողովը միաձայն ընտրեց պատգամաւորներ՝ ազնուականութեան նահանգական պարագլուխ իշխան Կ. Բագրատիօն-Մուխրանսկուն, Սղնախի ազնուականութեան գաւառական պարագլուխ իշխան Անդրոնիկովին և իշխան Վաչնաձէին։

—

Վաղը, չորեքշաբթի, ամսոյս 20-ին, Մոսկվայում պէտք է հանդիսաւոր կերպով տօնվի այնտեղի Գիւղատնտեսական ընկերութեան 50 ամեայ հիմնադրեայ յօբելեանը։ Գիւղատնտեսական ցուցահանդէսին և ժողովին եկած հասարակութիւնը պէտք է ներկայ լինի այդ տօնին։ Զանազան հիմնարկութիւններ և ընկերութիւններ, նրանց թւում և Կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը ուղարկել են շնորհաւորական հեռագիրներ։ Այդ օրը վերջանում է և ժողովի ամբողջ գործունէութիւնը, և հիւրերը պէտք է ցրվեն։

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը կայանալու է շաբաթ օր, դեկտեմբերի 23-ին, դումայի դահլիճում։

—

Բժշկապետ Ց. Դասպարեանց ուղարկեց մեզ 100 ռուբլի, «Մշակի» 1896 թվի տասն օրինակի բաժանորդագին, որպէս զի այդ օրինակները ուղարկենք, ինչպէս և անցեալ տարի, հետևեալ հիմնարկութիւններին՝ 1) Ղամարլուի հայոց դպրոցին, 2) Վարդաշէնի հայոց դպրոցին, 3) Նախիջևանի գաւառի Աստապատ գիւղի դպրոցին, 4) Խանլիլար գիւղի հայոց դպրոցին, 5) Զանգեզուր գաւառի Շիրվանաձոր գիւղի դպրոցին, 6) Դաւալուի հայոց դպրոցին, 7) Հաղրութի հայոց դպրոցին, 8) Թաղլար գիւղի հայոց դպրոցին, 9) Ղազախի գաւառի Կօղբենդ գիւղի հայոց դպրոցին, 10) Լենքօրանի հայոց օրիորդաց դպրոցին։

—

Դեկտեմբերի 10-ին, Պետերբուրգում, ազնուականութեան ժողովարանի դահլիճներում կայացաւ սովորական հայկական երեկոյթը, որ ամեն տարի տրվում է չքաւոր հայ ուսանողների օգտին։ Ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, երեկոյթը գրաւել էր հասարակութեան շատ մեծ բազմութիւն։ Բոլոր դահլիճները զարդարված էին արևելեան ճաշակով. կիօսկներում հայ տիկինները ծախում էին ծաղիկներ, պտուղներ, շամպայն և այլն։ Տիկին Թումանեան և պ. Շահլամեան երգեցին դուէտ «Մայր Արաքսի» երգը, իսկ Կազաչէնկոյի ղեկավարութեամբ երգեցիկ խումբը երգեց «Ձեն երջանիկ» շատ աջող կերպով։ Մուտքի կողմից ևս երեկոյթը շատ աջող է անցել։

—

«Сѣверный Кавказъ» լրագիրը տխուր գոյներով է նկարագրում Թիւրքիայից եկած՝ և Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում և հիւսիսային Կովկասի ուրիշ տեղերում ապաստարան գտած գաղթականների ողբալի վիճակը։

—

ԵԼԵՆՈՎԿԱՅԻՑ մեզ գրում են. «Ելենովկա գիւղում, դեկտեմբերի 11-ին, երկու տներում ընտանիքի բոլոր անդամներին, փոքրից մինչև մեծերը, կոտրել են։ Ցանցառները յայտնի չեն։ Սպանութեան տեղը գնացին պրօկուրորը և գաւառապետը»։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Թեմական դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը նշանակված է դեկտեմբերի 24-ին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. ՊՕԼԻՍ, 16 դեկտեմբերի։ Պաշտօնական հաղորդագրութիւններից երևում է, որ Զէյթունի առման նախընթաց կռւում հայերը կորուստ ունեցան 2,500 հոգի, իսկ թիւրքերը—250 հոգի։

—

Երէկ, դեկտեմբերի 18-ին, Ռուսաց գործակալութեան միջոցով, Կ. Պոլսից ստացանք հետևեալ հեռագիրը. «Բ. Դուռը հերքում է Զէյթունից ստացված տեղեկութիւնը։ Դեսպանները վերանորոգեցին իրանց առաջարկութիւնները՝ ապատամբների անձնատուր լինելու վերաբերեալ բանակցութիւնների մէջ միջնորդելու մասին։»

—

«Fremdenblatt» լրագրում տպված է հետևեալ կիսապաշտօնական նկատողութիւնը. «Երեքպետեան դաշնակցութեան պատկանող կառավարութիւնները ամենևին տրամադիր չեն թոյլ տալ, որպէս զի հայոց հարցը կրկին դիպլօմատիական միջամտութեան առարկայ դառնայ։ Հայաստանում տեղի ունեցած բռնութիւնները Անգլիայի և նրա մի քանի ազէնտների գործողութիւնների հետևանք են, և այդ պատճառով Վիէննայի, Բերլինի և Հռոմի կաբինէտները վճռեցին դադարեցնել դիպլօմատիական բոլոր գործողութիւնները՝ հնարաւորութիւն տալով սուլթանին ըէֆօրմներ մտցնելու համար։»

—

Կ. Պոլսից «Times» լրագրին հեռագրում են. «Ասում են, որ վեց պետութիւնների դեսպանները արդէն կազմել են կոտորածների ժամանակ ընկած զոհերի ցուցակը. և կամենում են Բ. Դրան ներկայացնել այդ ցուցակը՝ մատնացոյց անելով այն տարբերութեան վրա, որ կայ պաշտօնական թւերի և դեսպանների ստացած թւերի մէջ։ Բացի դրանից, դեսպանները դիտաւորութիւն ունեն պահանջել, որպէս զի միջազգային քննիչ յանձնաժողով նշանակվի։»

—

«Times» լրագիրը հաղորդում է, որ Սիվասի յունաց կօլօնիան 25,000 ֆրանկ է պահանջում իբր վարձատրութիւն այն վնասների և կորուստների, որ նրանք ունեցան խառնակութիւնների և սպանութիւնների ժամանակ։

—

Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ մեծ պետութիւնների դեսպանները հաւաքպէս առաջարկեցին Բ. Դրան՝ զինուորական դատաստաններ հաստատել թիւրքաց-Հայաստանում կատարված սպանութիւնների հեղինակներին դատելու համար։ Դեսպանները առաջարկեցին նոյնպէս փոխառութիւն անել՝ վնասածներին վարձատրելու համար։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, նոյեմբերի 20-ին

Սեպտեմբերի 27-ից գրած նամակով մի քանի տեղեկութիւններ տուած ենք տեղոյս Որբանոցի վարժարանին վրա՝ խոստանալով ուրիշ անգամ մ'ալ գրել այստեղի դպրոցներու մասին ընդհանրապէս։ Ահա կը կատարենք մեր խոստումը։

Այժմ Վանի մէջ գտնուած դպրոցները հետևեալներն են.

Ծխական վարժարաններ

Ցիսուսեան և Շուշանեան (երկսեռ), տարեկան ծախս 180 օսմ. լիրա, դպրոցի մէջ գոյացած թոշակադրամ—35 օսմ լիրա, ուսուցիչներ մնայուն 5, ուսուցիչներ երթևեկ 5, վարժուհիներ միշտ մնայուն 2, աշակերտներ 190, աշակերտուհիներ՝ 90։

Արարոց ս. Մատթէոսեան (երկսեռ), տարեկան ծախս 230 օսմ. լիրա, թոշակադրամ 50 լիրա, ուսուցիչներ մնայուն 9, երթևեկ 2, վարժուհիներ միշտ մնայուն 3, աշակերտներ 440, աշակերտուհիներ 310։

Նորաշէնու ս. Յովհաննէսեան. տարեկան ծախս 100 օսմ. լիրա, գոյացած թոշակադրամ 35 լիրա, ուսուցիչներ մնայուն 6, ուսուցիչներ երթևեկ 4, աշակերտներ 290։

ՑայնկոյսՎորոյ ս. Մարկոսեան և Գայեանեան (երկսեռ). տարեկան ծախս 80 լիրա, գոյացած թոշակադրամ 30, ուսուցիչներ մնայուն 5, երթևեկ 2, վարժուհիներ միշտ մնայուն 2, աշակերտներ 180, աշակերտուհիներ 130։

Մասնաւոր վարժարաններ

Ս. Յակոբայ ս. Ղուկասեան՝ տարեկան ծախս 35 լիրա, ուսուցիչներ մնայուն 2, աշակերտներ 90։

Հայկավանուց վարժարան՝ տարեկան ծախս 30 լիրա, ուսուցիչներ մնայուն 2, աշակերտներ 60։

Ս. Սանդխտեան (օրիորդական), տարեկան ծախս 70 լիրա, գոյացած թոշակադրամ 20 լիրա, ուսուցիչներ երթևեկ 4, վարժուհիներ միշտ մնայուն 3, աշակերտուհիներ 150։

Բիւզանդեան (օրիորդական), տարեկան ծախս 60 լիրա, գոյացած թոշակադրամ 60 լիրա, ուսուցիչներ մնայուն 2. երթևեկ 2, վարժուհի 2, աշակերտուհիներ 120։

Ամերիկեան (բողոքական, օրիորդական), տարեկան ծախս 150 լիրա, գոյացած թոշակ 30 լիրա, ուսուցիչներ երթևեկ 2, վարժուհիներ միշտ մնայուն 5, աշակերտուհիներ 130։

Ամերիկեան բողոքական (արական), տարեկան ծախս 150 լիրա, գոյացած թոշակադրամ 40 լիրա, ուսուցիչներ մնայուն 6, աշակերտներ 140։

Որբանոցի վարժարան՝ տարեկան ծախս 200 լիրա, գոյացած թոշակադրամ 200 լիրա, ուսուցիչներ մնայուն 8, աշակերտներ 200։

Ընդամենը՝ տարեկան ծախս 1,285 օսմ. լիրա, գոյացած թոշակադրամ 500 լիրա, աշակերտներ 1590, աշակերտուհիներ 930։

Վանի հայեր իբր 35,000 կենթադրուին։

Ամերիկայի միսիօնարներ ունին նաև մի մանկապարտէզ իբր 40 աշակերտներով, մանչ և աղջիկ 4—7 տարեկան մանուկներու համար, բայց ադոր վարիչը ամերիկացի օրիորդ մէ, որ որչափ ալ հմուտ լինի Ֆրէօբէլեան մեթոդին, չը կրնար սակայն—դէթ առ այժմ—զգալի արդիւնք մը տալ, քանի որ անտեղեակ է հայ լեզուին, և վերջապէս այս միջավայրի կեանքի բազմաղան հանգամանքներուն։

Մեր վարժարաններուն համար ընդհանուր տեսչութիւն կը պակսի. կը պակսի նոյնպէս ընդհանուր ծրագիր։ Իրաւ է, թէ քանի մը տարի առաջ տեղւոյս ազգային վարչութիւն տեղացի 9 ուսուցիչներէ յանձնաժողով մը կազմեց և սա 9 ամեայ դասընթացքով ծրագիր մը պատրաստեց այստեղի ծխական վարժարաններուն համար, բայց այդ ծրագիր պատրաստող ուսուցիչներէն շատերն իսկ կը խոստովանին, որ դա զերծ չէ խոշոր պակասութիւններէ։ Ասանց ադոր ալ այդ ծրագրի գործադրութիւնը բոլորովին կամայական պիտի լինէր, ինչպէս եղած է ցարդ, վասն զի ամեն մի դպրոց, կամ ամեն մի ուսուցիչ իր յատուկ ըմբռնումն ու հայեացքներն ունի, ինչպէս դպրոցական շատ խնդիրներու, նոյնպէս և ծրագրի մասին։

Կան դպրոցներ, որոց տեսչութեան մէջ՝ տիրող ձայն ունին հոգաբարձու կամ թաղական աղաներ, այսինքն դպրոցական հարցերէ այնչափ հասկցող և կրթական գործի յառաջդիմութեան այնչափ նախանձախնդիր անձեր որ, զորօրինակ, միշտ դէմ են գիտութեանց դասերուն. «չէ՞ որ այդ դասեր անաստուածութիւն կը սորվեցնեն»... Հաղուագէպ չէ տեսնել, որ շատ անգամ ծխական վարժարանաց բարձրագոյն կարգեր կը ցրուին, կամ ուսուցչական անտեղի փոփոխութիւններ կը կատարուին այդ աղաներու հոգատարութեանց պատճառաւ։ Ամեն նորընտիր թաղական կամ հոգաբարձու մարմին փոփոխութիւն մը կատարելու է անպատճառ, որպէս զի գործ մը ցուցած ըլլայ։ Միշտ ելևմտից պիւտճէն է, որ պատրուակ կը բռնուի այս մշտական փոփոխութեանց, իսկ բուն նպատակ և կարևորութիւն ո՞վ է փնտռող, ով է հարցնող... Ցոյժ ցաւալի է այս անիշխանութիւնը։ Մեր ազգային վարչութիւն մեր դպրոցներով հետաքրքրվելու—թողուք ձեռնհասութիւն—ժամանակ ունի՞... Իսկ ուսուցիչներ քանիցս փորձ ըրին միանալու, ժողովներ կազմելու, կրթական գործի մէջ միօրինակ ծրագիր և ուղղութիւն պահելու նպատակաւ. բայց միշտ ուսուցչաց իւրաքանչիւրի եսը, անոնց հիմնովին տարբեր անհատականութիւններ արգելք եղած են արդիւնքի մը յանգելու այստեղ...

Գալով մասնաւոր վարժարաններուն՝ Որբանոց և բողոքականաց վարժարան ունին 10 ամեայ դասընթացքով ուրոյն ծրագիրներ, Սանդխտեանը՝ 7 ամեայ ծրագիր մը ունի, իսկ ամերիկեան օրիորդականը, ինչպէս և Բիւզանդեանը յատուկ ծրագիր չունին։

Վանի դպրոցներուն մէջ կաւանդուին՝ կրօն, եկեղեցական, ազգային և ընդհանուր պատմութիւն, հայերէն (աշխարհիկ և գրաբար), թիւրքերէն և ֆրանսերէն լեզուներ, աշխարհագրութիւն, գրահաշիւ և թուաբանութիւն, բնագիտութիւն և բնական պատմութիւն, գեղագրութիւն և գծագրութիւն։ Կայ նաև երաժշտութիւն՝ միայն եկեղեցական երգեցողութեան համար և առանց նօթայի։ Մարմնամարզն ալ արգելուած է։ Թիւրքերէնը, իբրև պետական լեզու, պարտաւորիչ է ամեն արական դպրոցի համար։ Ֆրանսերէնը քանի մը վարժարանաց մէջ միայն կը դասաւանուի. բողոքականներ անգլիերէն կը սորվեցնեն ֆրանսերէնի տեղ. անոնց դպրոցներուն մէջ ազգային պատմութիւն ալ չաւանդուիր։ Օրիորդական վարժարաններուն մէջ գիտութեանց դասեր չը կան, ձեռագործի դասեր կան։ Մատենագրութեան դաս վերջերս մուտ է գործել քանի մը ծխական վարժարանաց մէջ, իսկ Որբանոցի մէջ վաղուց կը դասաւանուէր արդէն։ Երկրաչափութիւն և աստեղագիտութիւն, ինչպէս և երկրաբանութիւն և բնալուծութիւն, կենդանաբանութիւն և բուսաբանութիւն միայն Որբանոցի և բողոքականաց վարժարանին մէջ կը դասաւանուին։ Գիտութեանց դասեր Որբանոցի և բողոքականաց դպրոցին մէջ միակ է, որ գործիքներով կաւանդուին։

Ուսուցչաց ձեռնարկներու կամ աշակերտաց ընթերցման յարմար գրքերու մատենադարան մի վնտռէք ոչ մի ծխական վարժարանի մէջ. իսկ մասնաւորներէն միայն Որբանոց և բողոքականներն ունին։ Ծխական վարժարաններէն շատեր ինչպէս և Սանդխտեանը, աշխարհացոյց քարտէզ իսկ չունին։ Դարձեալ Որբանոց և բողոքականաց վարժարաններն են, որ անխտիր ամեն աշակերտի համար կանոնաւոր դրասեղան և նստարան ունին. իսկ միւս վարժարաններէն ոմանք երբէք չունին, ոմանք՝ քիչերու համար միայն, կան որ բոլոր մէկ սրահի մէջ են ծալապատիկ նստած։ Դասարանական դրութիւն ընդհանրացած է, բացի քանի մը ծխական վարժարաններէ։ Գործածուած դասագրքեր գլխաւորապէս Կ. Պոլսոյ մէջ տպագրուածներն են։

Վանի մէջ դրսեցի ուսուցիչ չը կայ. ամենքն ալ տեղացի են և իրենց ուսումն ստացեր են Վանի դպրոցներուն մէջ և ինքնաշխատութեամբ զարգացեր են, որչափ կարելի է զարգանալ այսպիսի մի յետ ընկած քաղաքի մէջ... Քիչեր կան որ դրսեր ալ գտնուած և իրենց զարգացման պարապած են։—Ուսուցչաց վարձք ամսական 50—250 ղրուշ է։ Կան ծխական դպրոցներ՝ ուր ժամին 50 փարա վարձք որոշուած է, առանց արժանիքի խորութեան։

Բողոքականաց վարժարաններու եկամուտը ամերիկեան Բորդ ընկերութենէն կուգայ, և ատոնց տեսչութիւնը ամերիկացի միսիոնարներու ձեռքն է. ուսուցիչներ հայ բողոքականներ են։

Բիւզանդեան վարժարանը երկու տարի է, որ հաստատուած է մի գրաւաճառի ձեռօք, որ կը վարէ դպրոցի իր զառամեալ հօր, քրոջ, կնոջ, մի քահանայի և մի ուրիշ վարժուհիի օժանդակութեամբ. անոր եկամուտը միայն թոշակներն են աշակերտաց վճարած։

Սանդխտեանի հասոյթից աղբիւրներն են թոշակներէ զատ նաև կտակներու և նուիրատուութեանց աղբիւրներ։ Պատրիարքարանէն ընտրուած յատուկ հոգաբարձութիւն մը է, որ կը վարէ այդ վարժարան։—Որբանոցի հասոյթից աղբիւրը միայն աշակերտած թոշակներն են։ Իսկ ծխական վարժարանաց ծախքերը կը հոգացուին եկեղեցեաց կալուածական եկամուտներով։ Վերջերս թոշակ ալ սահմանուած է։

Անժխտելի իրողութիւն է, որ եթէ մեր թաղական աղաներ կամ հոգաբարձու էֆէնտիներ իրենց պաշտօնին գիտակից կամ բարեխիղճ անձեր լինէին, մեր ծխական վարժարանաց եկամուտներով ալ կարելի էր զանոնք դնել իրենց դրից ցանկալի բարձրութեան վրա. բայց կուսակցական կոյր հաշիւներ, արմատացած անվերջ հակառակութիւնները այնչափ արգելք են անոնց յառաջադիմութեան՝ որչափ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի օրէց օր վատթարացում և աղգային գործաւոր վարչութեան մը պակասութիւն։ Ցիսուսեան վարժարան ամիսէ մը ի վեր փակուած է, վասն զի ուսուցչաց ամսականներ չեն վճարուեր։ Զը կայ ծխական վարժարանի ուսուցիչ մը, որ 2—5 և աւելի ամսական պահանջ չունենայ։

Առ այժմ այսչափ։

Մ—դ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ, 16 դեկտեմբերի։ Սուլթանը ընդունեց ռուսաց դեսպանին։

Փոխ-ծովապետ Արիֆ ճանապարհ ընկաւ Պետերբուրգ սուլթանի ընծաներով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 16 դեկտեմբերի։ Պատգամաւորների ժողովին առաջարկութիւն է արված՝ իրաւունք տալ Միացեալ-Նահանգների նախագահին եկող տարի Վաշինգտոն հրաւիրելու մի կոնֆերէնցիա բոլոր պետութիւնների ներկայացուցիչներից, որոնք կալուածներ ունեն Ամերիկայում, սահմանական վէճերը որոշելու համար,

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ Բարձրագոյն ուկազ. «Պետական քարուղարի օգնական, պրոֆէսոր և զինուորական իրաւաբանական ակադեմիայի անդամ գաղտնի խորհրդական Նեկլիւդովին ամենաողորմածաբար հրամայված է ներքին գործերի մինիստրի օգնական լինել։»

Ներքին գործերի մինիստրը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՊԱՐԻԶ, 16 դեկտեմբերի։ «France» լրագրում տպված են 30 պատգամաւորների ազգանուններ, որոնք չէկեր են ստացել Պանամայի ընկերութիւնից։ Լրագիրը յայտնում է, որ կը շարունակի մերկացումները։ Նրա յիշած պատգամաւորները որոշեցին գանգատ տալ դիֆամացիայի համար։

ԲԵՐԼԻՆ, 16 դեկտեմբերի։ Կայսերական կանցլերը ճանապարհ ընկաւ Վիէննա այցելելու իր եղբօրը, և նոյնպէս աւստրօ-ունգարական արտաքին գործերի մինիստրին։

ԿԵՕՆԻԳՍԲԷՐԳ, 16 դեկտեմբերի։ Նաւադնացութիւնը փակված է։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 16 դեկտեմբերի։ Կարակոից հաղորդում են. «Մեծ ցոյց տեղի ունեցաւ. Անգլիայի դէմ։ Ներքին գործերի մինիստրը մի ճառ արտասանեց, որի մէջ, ի միջի այլոց, ասեց որ «Վենեցուէլան կը հպատակվի միջորդ դատարանի վճռին։ Եթէ մի այդպիսի դատարան կը մերժեն իրան, այն ժամանակ նա կը դիմի զէնքին։»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ Պետերբուրգում դեկտեմբերի 9-ից մինչև 16 հիւանդացան 68, մեռան 54. Նահանգներում—Վոլգայի նահանգում նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 2-ը հիւանդացան 30, մեռան 15. Կիեվի նահանգում նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 2-ը հիւանդացան 40, մեռան 14։ Պետերբուրգի նահանգում դեկտեմբերի 3-ից մինչև 9-ը հիւանդացան 7, մեռան 8 հոգի։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ-ՎՐԱ, 17 դեկտեմբեր։ Այսկից հաղորդում են, որ ամիից պոկված սառուցը ծովը տարաւ մօտ 800 ձկնորսներ և մի քանի հարիւր սահնակներ։ Ազատված են 400 մարդ։ Ձիաները սատկում են։ Մարդկանց չարունակում են մակոյկներով սառուցից հանել։

ԲԵՐԼԻՆ, 17 դեկտեմբերի։ Օտար անունով ապրող բարոն Համմէրշտէյն ձերբակալված է և յանձնված Գերմանիային։ Համմէրշտէյն «Kreuz. Zeitung» լրագրի գլխաւոր խմբագիրն է, որը փախել էր այդ լրագրի գումարները վատնելուց յետոյ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 15-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94	ր.	— կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	$72\frac{1}{2}$ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	»	15 »
Ոսկի — — արժէ . .	7	»	50 »
Մաքսային կուպօններ — . .	150	»	— »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկօնտ — . .	$6\frac{1}{2}$		$7\frac{1}{2}$%
4% պետական բէնտա	98	»	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	—	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	286	»	— »
— — երկրորդ —	239	»	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	206	»	50 »
5% պետական երկաթուղ. բէնտա.	99	»	75 »
4% ներքին փոխառութեան . . .	$97\frac{1}{2}$	»	—
$4\frac{1}{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	100	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մնաց.	150	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	$100\frac{3}{4}$	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100	»	75 »
Օդէսայի — —	99	»	25 »
Թիֆլիսի — —	97	»	50 »
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101	»	— »
— — — 5% . .	99	»	— »
— — Բուխարայի 6% . .	101	»	— »
— — — 5% . .	98	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՒ ԱՅՍ ՏՕՆԵՐԻՆ

Հայոց Հրատարակչական ընկերութիւնը լոյս է ընծայել

ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ

Զոյս լեզուով՝ հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն։ Վաճառվում է ընկերութեան գրասենեակում և բոլոր գրավաճառանոցներում։

Գինն է 1 ր. 20 կոպէկ։ 1—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆՆԱՅԷՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայաց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայաց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մսրթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

ՍԱՍՈՒՆ

Աշխատութիւն Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ

(Երկրորդ տպագրութիւն)

Արտատպված «Մշակ» լրագրից

ԳԻՆԸ 20 ԿՕՊ.

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

(№ 141) 4—5

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը յայտնում է Ընկերութեան անդամներին, որ ամսիս 23-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 7-ին, Դումայի դահլիճում նշանակված է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողով։

Պարտադիր առարկաները լինելու են.—1) Ընկերութեան 1894 թ-ի ընդհանուր, այն է—կենտրոնի և ճիւղերի հաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) Վերատեսուչ յանձնաժողովների զեկուցագրերը խորհրդի և ճիւղերի հաշիւների մասին և խորհրդի ու տեղական վարչութիւնների տուած բացատրութիւնները. 3) Ախալցխայի վարչութեան յաւելուածական նախահաշիւը 1895 թ. համար։

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիրը տպագրված լինելով, անդամները կարող են ստանալ ձրիաբար մի-մի օրինակ խորհրդի դրասենեակից (Սերգիէվսկայա փողոց, տուն Ալիխանեանի № 16)։

1—3 (№ 146)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ընկերութիւնս՝ որ հիմնված է քաղաքիս մէջ ընթերցանութիւնն ծաւալելու և աղքատիկ հայ ուսանողաց դաստիարակութեան նպաստելու նպատակաւ՝ պատիւ ունի ծանուցանել թէ իր ընթերցասրահի բացման ձեռնարկած է. հետևաբար կը փութայ յայտարարել բարեսէր ազգայնոց, թարգմանչաց և հեղինակաց, թէ ամենայն սիրով և մեծաւ շնորհակալութեամբ կընդունի իրեն եղած ամեն գրական նուէրները։

Ընկերութեանս հասցէն է՝ Société Arménienne des Amis de la Lecture, CAIRE, Egypte.

Ի դիմաց գործ. ժողովոյ ատենապետ՝ Գ. Շանթունի, Ատենադպիր Ա. Բ. Աստուածատուրեան

(№ 145) 2—4

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Կովկասեան բաժնի վարչութիւնը սրանով յայտնում է, որ բաժնի ԲԻՒՐՕՆ գտնվում է Թիֆլիսի շերամապահական կայարանի շինութեան մէջ և բաց է ամեն օր, բացի կիրակի և ազգային տօներից, առաւօտեան 12—2 ժամերին և երեկոյեան 5—6 ժամերին։ 3—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Առաջիկայ ծննդեան տօների պարգևների համար պատրաստված են մեծ քանակութեամբ հայերէն և ռուսերէն փառակազմ գրքեր։ Այդ գրքերի անուանական ցուցակը, բացի գրավաճառանոցի լիակատար ցուցակներից, որոնք ձրի են բաժանվում, հայերէնը տպվում է «Արծագանքում», իսկ ռուսերէնը «Кавказъ»-ում։ Նոյն տեղը բաժանորդագրութիւն է բացված տեղական և օտար երկրեայ բոլոր պարբերական հրատարակութիւնների համար։ Մինչև յունվար բաժանորդ գրվողները օտարերկրեայ հրատարակութիւնների համար ճանապարհի ծախս չեն վճարում։

(№ 142) (ա. ա.) 5—10

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, „ԷԿՕՆՕՄԻԴԷՍ“ ֆիրմայից։

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շերամապահութեան կայարանում՝ քննելուց յետոյ։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, Եղբ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ, իսկ ՆՈՒԻՒ՝ Աղա Մուսայ Մահմէդովին։

Այս հասցէով. Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ.

(№ 138) (և. յ.) 6—24

„БУДИЛЬНИКЪ“-Ի ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԸ

«Будильникъ» թերթի խմբագրութիւնը, կամենալով տօնել իր գոյութեան 32-րդ տարին, բանում է 1896 թ-ին ցուցանդէս հանրամարդկային կուրսերների, մարդկային և մեր առօրեայ կեանքի կենցաղական «մարգարիտների»։ Այդ նպատակով

ՍՏՈՐԱԳՐՎԵՑԷՔ «БУДИЛЬНИКЪ» ՕՐԱԳՐԻՆ 1896 Թ.

Ցուցանդէսը կը բացվի օրագրի էջերում ամբողջ տարի այն բաժանորդների համար, որոնք կը վճարեն 10 ր. և կէս տարի (մինչև յուլիսի 1-ը) այն բաժանորդների համար, որոնք կը վճարեն 5 ր. (Մոսկվայում 9 ր. և 4 ր. 50 կ.)։ Հասարակութեան հաճոյքի համար թոյլ է տրվում մաս-մաս վճարել—5 ր. բաժանորդ գրվելիս և մնացած 5 ր. յունիսի 1-ին։

Տարեկան բաժանորդներին պրեմիա

«ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ»

կոմս Լ. Ն. Տոլստոյի կոմեդիայի լիակատար բնագիրը, հեղինակի պատկերով և ութ տեսարաններով, որոնք նկարված են բնութիւնից, Կ ո ր չ ի թ ա տ ր օ ն ի դերասաններից, Ֆ ի չ է ր գեղարուեստագէտ-ֆոտոգրաֆի ձեռքով։

Բաժանորդագրին ուղարկել ՄՕՍԿՎԱ, խմբագրութիւն «БУДИЛЬНИКЪ»-Ի։

(№ 140) 2—3

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետևեալ հայ գործիչների պատկերները՝ Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ։ Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷՔՍԱՆԴՐԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների։

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Գ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԹՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծադիր 3 ռուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է։

(№ 117) 5—10

Ս. ԲԱՀԱԹԵԱՆ

«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՏԱՍՏԱՆՈՒՄ · Գինն է 40 կոպ.

» » » ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ · · Գինն է 35 կոպ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։

(№ 74) (և.) 15—15

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Декабря 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.